

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՂ

S. Դավթյան

Գ. Խաչատրյան

21 մայիսի 2010 թ.

N 358-Ն

11 մայիսի 2010 թ.

N 6

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՇԵՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի երրորդ մասի «գ» ենթակետի դրույթների տարընթերցումը բացառելու նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ի լրումն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի մարտի 2-ի «2009 թվականից ավելացված արժեքի հարկի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ» N 2 պաշտոնական պարզաբանման 1.6-րդ կետում նշվածի՝ *պաշտոնապես պարզաբանում ենք.*

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի համաձայն ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում այն առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին, և (կամ) որի կողմից նախորդ օրացուցային տարում առևտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների ձեռքբերման (բացառությամբ ներմուծման) համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողի:

Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի դրույթների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի մարտի 2-ի N 2 պաշտոնական պարզաբանման 1.6-րդ կետի կիրառման առումով՝

1) ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման դիմաց պետական բյուջեից վճարվող գումարները (եկամուտները) չեն դիտվում որպես մեկ հարկ վճարողից ստացման ենթակա գումարներ,

2) որպես առևտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանք է դիտվում ավտոմեքենաների գազալցման (գազալիցքավորման) կայանների կողմից ձեռք բերվող գազը: